



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

Ա Շ Խ Ա Տ Ա Կ Ա Ր Գ Ա Յ Ի Ն Ո Ր Ո Շ ՈՒ Մ

««ԻՆԵԿՈՐԱՆԿ» ՓԲԸ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՕՐԵՆՍՈՐՔԻ 382-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ԿԵՏՈՒՄ ՆՇՎԱԾ «ԱՅԼ ԱՆԲԱՐԵՆՊԱՍՏ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐ» ԻՐԱՎԱԿԱՆ ԵԶՐՈՒՅԹԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԳՈՐԾԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՐԺԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Սահմանադրական դատարանը, քննության առնելով ««Ինեկորանկ» ՓԲԸ դիմումի հիման վրա՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 382-րդ հոդվածի 1-ին կետում նշված՝ «այլ անբարենպաստ հետևանքներ» իրավական եզրույթի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի քննությունը մերժելու մասին առաջարկությունը, **Պ Ա Ր Ձ Ե Ց .**

1. 2023 թվականի մարտի 17-ին Սահմանադրական դատարան է մուտքագրվել «Ինեկորանկ» ՓԲԸ (այսուհետ՝ Դիմող) դիմումը, որով Դիմողը խնդրել է.

«ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 382-րդ հոդվածի 1-ին կետում նշված «այլ անբարենպաստ հետևանքներ» իրավական եզրույթը ճանաչել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 79-րդ հոդվածին հակասող և անվավեր»:

2. Ներկայացնելով թիվ ԵԴ/12618/02/19 քաղաքացիական գործի դատավարական նախապատմությունը՝ Դիմողը նշում է, որ իր համար բացասական իրավական հետևանքներ է առաջացրել Սնանկության դատարանի և Վճռաբեկ դատարանի կողմից իր նկատմամբ կիրառված, Սնանկության դատարանի՝ 2020 թվականի հոկտեմբերի

20-ի վճռով և Վճռաբեկ դատարանի՝ 2022 թվականի նոյեմբերի 18-ի որոշմամբ անմիջականորեն վկայակոչված ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 382-րդ հոդվածի 1-ին կետը:

Սահմանադրական դատարանի և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ իրավական որոշակիության վերաբերյալ արտահայտած իրավական դիրքորոշումների վկայակոչմամբ Դիմողը փաստում է, որ դրանք համադրելով սույն դիմումով վիճարկվող ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 382-րդ հոդվածի 1-ին կետի իրավակարգավորման հետ՝ գտնում է, որ տվյալ իրավակարգավորման մեջ տեղ գտած «կամ նրա համար այլ անբարենպաստ հետևանքներ» եզրույթը հակասում է Սահմանադրության 79-րդ հոդվածով սահմանված որոշակիության սկզբունքին, քանի որ նորմը դուրս է գալիս կանխատեսելիության, հստակության և որոշակիության չափանիշներից այնքանով, որքանով իրավահարաբերության կրողներին հնարավորություն չի ընձեռում կանխատեսելու, թե հատկապես ինչպիսի՞ հետևանքների առաջացման պայմաններում կարելի է եզրահանգել, որ երաշխավորի համար առաջացել են այլ անբարենպաստ հետևանքներ: Ըստ Դիմողի՝ հատկանշական է, որ «նորմը նախատեսում է երաշխավորությունն օրենքի ուժով դադարած համարելու հստակ չափանիշ՝ առանց երաշխավորի գրավոր համաձայնության պարտավորության փոփոխությունը, դա պայմանավորելով մի դեպքում հստակ հետևանքով (հանգեցրել է երաշխավորի պատասխանատվության մեծացման), իսկ որպես հաջորդ հետևանք, որը կապված չէ պատասխանատվության մեծացման հետ, օրենքով տրվել է «այլ անբարենպաստ հետևանք» առաջացնելու անորոշ եզրույթը»:

Դիմողն ընդգծում է, որ «անբարենպաստ հետևանքներ» եզրույթի բովանդակային վերլուծությունից կարելի է ենթադրել, որ անբարենպաստ հետևանքների առաջացումն այնպիսի իրավիճակ է, որի առաջացման ուժով անբարենպաստ հետևանքի կրողը հայտնվում է նախորդ դրության համեմատ ոչ նպաստավոր իրավիճակում: Մինչդեռ, Դիմողի պնդմամբ, ՀՀ քաղաքացիական օրենսգրքում նման հասկացության գետեղումը չի կարող համարվել արդարացված հատկապես այն

հիմնավորմամբ, որ «անբարենպաստ հետևանքներ» եզրույթն ունի գնահատողական չափազանց բարձր մակարդակ: Ըստ Դիմողի՝ օրենքում «անբարենպաստ հետևանք» հասկացությունը կարող է մեկնաբանվել և ընկալվել յուրովի, և հասկացության բովանդակությունը բացահայտված չլինելու արդյունքում երաշխավորությամբ ապահովված պարտատերերը չեն կարող բավարար չափով հստակ կանխատեսել, թե հատկապես իրենց ո՞ր գործողությունները կարող են երաշխավորի համար առաջացնել անբարենպաստ հետևանքներ, և հատկապես ո՞ր դեպքերում երաշխավորությունը կարող է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 382-րդ հոդվածի 1-ին կետի ուժով համարվել դադարած:

Դիմողը փաստում է, որ «անբարենպաստ հետևանք» եզրույթի բովանդակային վերլուծության արդյունքում առաջնային է դառնում նաև այն հարցի քննարկումը, թե հատկապես ի՞նչ աստիճանի բացասական հետևանքների առաջացմամբ պայմանավորված երաշխավորությունը կարող է դադարել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 382-րդ հոդվածի 1-ին կետի ուժով: Դիմողի պնդմամբ՝ խնդրո առարկա հոդվածում նման ձևակերպման պարագայում հնարավոր չէ կանխատեսել բացասական հետևանքների առաջացման բնույթի աստիճանը, որը կարող է հանգեցնել երաշխավորության դադարման:

Դիմողը նշում է. «Խնդիրը կայանում է նրանում, որ «այլ անբարենպաստ հետևանք» եզրույթի ձևակերպումից հնարավոր չէ հասկանալ օրենսդրի կամքը, թե արդյոք ցանկացած տեսակի անբարենպաստ հետևանքի առաջացումը կարող է հանգեցնել երաշխավորության պայմանագրի դադարման՝ ակամա այն հանգամանքից՝ անբարենպաստ հետևանքի առաջացումը կրում է զուտ ձևական բնույթ, թե բովանդակային առումով երաշխավորը հայտնվել է նախորդ դրության հետ համեմատ առավել նվազ իրավիճակում»:

Ամփոփելով՝ Դիմողը եզրահանգում է, որ Բարձր դատարանի կողմից «անբարենպաստ հետևանք» եզրույթի վերաբերյալ տրված իրավական դիրքորոշումը կարող է նախադեպային հենք հանդիսանալ ինչպես իրավահարաբերության

սուբյեկտների, այնպես էլ դատական համակարգի համար նշված հասկացության մեկնաբանման համար և հնարավորություն ընձեռել խուսափելու կամայական մեկնաբանություններից:

3. Ելնելով դիմումի և կից ներկայացված դատական ակտերի ուսումնասիրությունից, ինչպես նաև ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29-րդ և 69-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ սույն անհատական դիմումով գործի քննությունը ենթակա է մերժման՝ հետևյալ պատճառաբանությամբ.

3.1. Սահմանադրության 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի համաձայն՝ Սահմանադրական դատարան կարող է դիմել յուրաքանչյուր ոք՝ կոնկրետ գործով, երբ առկա է դատարանի վերջնական ակտը, սպառվել են դատական պաշտպանության բոլոր միջոցները, և վիճարկում է այդ ակտով իր նկատմամբ կիրառված նորմատիվ իրավական ակտի դրույթի սահմանադրականությունը, ինչը հանգեցրել է Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված իր հիմնական իրավունքների և ազատությունների խախտման՝ հաշվի առնելով նաև համապատասխան դրույթին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունը:

Սահմանադրական վերոհիշյալ նորմն իր ամրագրումն է ստացել նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասում:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ Սահմանադրական դատարանը գործի քննությունն ամբողջությամբ կամ մասամբ մերժելու մասին աշխատակարգային որոշում է ընդունում՝ սույն օրենքի 69-րդ հոդվածով նախատեսված այլ դեպքերում:

Նույն օրենքի 69-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ անհատական դիմումներով գործի քննությունը, ի թիվս այլնի, կարող է մերժվել նաև այն դեպքերում, երբ անհատական դիմումն ակնհայտ անհիմն է:

Սահմանադրական դատարանը 2009 թվականի մարտի 17-ի ՍԴԱՌ-21 աշխատակարգային որոշմամբ արձանագրել է, որ «(...) անհատական դիմումների քննությունը կարող է մերժվել նաև այն դեպքերում, երբ անհատական դիմումն ակնհայտ անհիմն է: (...) Անհատական դիմումն ակնհայտ անհիմն է, երբ, թեև դրանում բարձրացված հարցը ենթակա է սահմանադրական դատարանի քննությանը, այնուամենայնիվ, դիմումում չեն բերվում բավարար իրավական փաստարկներ այն հիմնավորելու համար»:

Սահմանադրական դատարանը վերը նշված՝ ՍԴԱՌ-21 աշխատակարգային որոշմամբ նաև արձանագրել է, որ «(...) դիմողը պետք է փորձի բավարար կերպով իրավաբանորեն հիմնավորել, թե իր սահմանադրական որ իրավունքներն են խախտվել և ինչ անմիջական պատճառահետևանքային կապ է առկա վիճարկվող օրինադրույթի և իր իրավունքների խախտման փաստի միջև: Նշված պահանջին համապատասխան՝ դիմողը պետք է նաև դիմումում առաջադրված հարցի հիմքում ներկայացնի իրավաբանորեն փաստված հանգամանքներ և նյութեր (...):»:

Այս առումով հարկ է փաստել, որ Սահմանադրական դատարան ներկայացվող անհատական դիմումների հիմնավորված լինելու պահանջը չի կարող պահպանված համարվել բոլոր այն դեպքերում, երբ դիմողը պարզապես հղում է կատարում Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված որևէ հիմնական իրավունքի՝ առանց ներկայացնելու վիճարկվող օրինադրույթի (դրանում առկա ենթադրյալ օրենսդրական բացի) և ենթադրյալ խախտման փաստի միջև պատճառահետևանքային կապի առկայության բավարար հիմնավորումներ:

Մինչդեռ, սույն դիմումով Դիմողը սահմանափակվել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 382-րդ հոդվածի 1-ին կետում առկա «այլ անբարենպաստ հետևանքներ» իրավական եզրույթի՝ Սահմանադրության 79-րդ հոդվածին հակասելու վերաբերյալ պնդման վկայակոչմամբ՝ բավարար կերպով իրավաբանորեն չհիմնավորելով իր կողմից վիճարկվող դրույթի և Սահմանադրության համապատասխան հոդվածի ենթադրյալ խախտման փաստի միջև պատճառահետևանքային կապի անմիջական առկայությունը:

Վերոգրյալի հաշվառմամբ՝ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ անհատական դիմումի շրջանակներում վիճարկվող դրույթի՝ միայն Սահմանադրության 79-րդ հոդվածով երաշխավորված իրավական որոշակիության սկզբունքին հակասելու վերաբերյալ պնդման վկայակոչումն ինքնին բավարար չէ Սահմանադրական դատարանում տվյալ դիմումի ընդունելիության շեմը հաղթահարելու համար, քանի որ իրավական որոշակիության սկզբունքը ենթադրում է հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակման պարագայում դրա հիմքերի և ծավալի սահմանման բավարար չափով որոշակիության երաշխավորում՝ այդ իրավունքների և ազատությունների կրողների և հասցեատերերի կողմից համապատասխան վարքագիծ դրսևորելու հնարավորությունն ապահովելու նպատակով: Հետևաբար՝ նման պարագայում նախ անհրաժեշտ է հիմնավորել որևէ հիմնական իրավունքի սահմանափակման փաստը և միայն դրանից հետո՝ այդ սահմանափակման լույսի ներքո քննարկման առարկա դարձնել իրավական որոշակիության սկզբունքի ապահովման հարցը, ինչը սույն դիմումի շրջանակներում տեղ չի գտել:

Իրավական որոշակիության սկզբունքի առնչությամբ հարկ է նաև նշել, որ Սահմանադրական դատարանն իր բազմաթիվ որոշումներով (ՍԴՈ-630, ՍԴՈ-731, ՍԴՈ-753, ՍԴՈ-984, ՍԴՈ-1142, ՍԴՈ-1176, ՍԴՈ-1213, ՍԴՈ-1270 և այլն) անդրադարձել է տվյալ սկզբունքին՝ արձանագրելով հետևյալը.

- «...օրենքը պետք է համապատասխանի նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի մի շարք վճիռներում արտահայտված այն իրավական դիրքորոշմանը, համաձայն որի՝ որևէ իրավական նորմ չի կարող համարվել «օրենք», եթե այն չի համապատասխանում իրավական որոշակիության (*res judicata*) սկզբունքին, այսինքն՝ ձևակերպված չէ բավարար աստիճանի հստակությամբ, որը թույլ տա քաղաքացուն դրա հետ համատեղելու իր վարքագիծը» (ՍԴՈ-630),

- «Իրավական պետության սկզբունքը, ի թիվս այլոց, պահանջում է նաև իրավական օրենքի առկայություն: Վերջինս պետք է լինի բավականաչափ մատչելի՝ իրավունքի սուբյեկտները պետք է համապատասխան հանգամանքներում հնարավորու-

թյուն ունենան կողմնորոշվելու՝ թե տվյալ դեպքում ինչ իրավական նորմեր են կիրառվում: Նորմը չի կարող համարվել «օրենք», եթե այն ձևակերպված չէ բավարար ճշգրտությամբ, որը թույլ կտա իրավաբանական և ֆիզիկական անձանց դրան համապատասխանեցնել իրենց վարքագիծը. նրանք պետք է հնարավորություն ունենան կանխատեսել այն հետևանքները, որոնք կարող է առաջացնել տվյալ գործողությունը» (ՄԴՌ-753),

- «...իրավական որոշակիության ապահովման տեսանկյունից օրենսդրության մեջ օգտագործվող հասկացությունները պետք է լինեն հստակ, որոշակի և չհանգեցնեն տարաբնույթ մեկնաբանությունների կամ շփոթության» (ՄԴՌ-1176),

- «Առավել ևս իրավունքի գերակայության սկզբունքի որդեգրման շրջանակներում օրենքում ամրագրված իրավակարգավորումները պետք է անձի համար կանխատեսելի դարձնեն իր իրավաչափ ակնկալիքները: Բացի դրանից, իրավական որոշակիության սկզբունքը, լինելով իրավական պետության հիմնարար սկզբունքներից մեկը, ենթադրում է նաև, որ իրավահարաբերությունների բոլոր սուբյեկտների, այդ թվում՝ իշխանության կրողի գործողությունները պետք է լինեն կանխատեսելի ու իրավաչափ» (ՄԴՌ-1213),

- «Նույնիսկ իրավական նորմի առավելագույն հստակությամբ ձևակերպման դեպքում դատական մեկնաբանությունը չի բացառվում: Իրավադրույթների պարզաբանման և փոփոխվող հանգամանքներին՝ զարգացող հասարակական հարաբերություններին դրանց համապատասխանեցման անհրաժեշտությունը միշտ էլ առկա է: Հետևաբար, օրենսդրական կարգավորման որոշակիությունը և ճշգրտությունը չեն կարող բացարձականացվել՝ նույնիսկ ոչ բավարար հստակությունը կարող է լրացվել դատարանի մեկնաբանություններով» (ՄԴՌ-1270),

- «...իրավական որոշակիության սկզբունքը ենթադրում է նաև դատարանների որոշումների հստակություն և կանխատեսելիություն, ինչը թույլ է տալիս իրավահարաբերությունների մասնակիցներին համապատասխան պատկերացում կազմել իրենց վարքագծի հնարավոր հետևանքների մասին» (ՄԴՌ-1270):

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նույնպես իր վճիռներում բազմիցս անդրադարձել է իրավական որոշակիության սկզբունքին: Մասնավորապես, Բուսույոկն ընդդեմ Մոլդովայի գործով կայացված վճռում Եվրոպական դատարանը գտել է, որ «օրենքով նախատեսված» արտահայտության պահանջներից մեկն այն է, որ համապատասխան միջոցը պետք է լինի կանխատեսելի: Նորմը չի կարող համարվել «օրենք», քանի դեռ ձևակերպված չէ բավարար հստակությամբ, որպեսզի անձին հնարավորություն տա կարգավորելու իր վարքագիծը. անձը պետք է կարողանա տվյալ հանգամանքներում ողջամիտ կերպով կանխատեսել իր տվյալ գործողության հետևանքները: Այդ հետևանքները չեն կարող կանխատեսելի լինել բացարձակ որոշակիությամբ: Թեև օրենքում որոշակիությունը մեծապես ցանկալի է, դա կարող է հանգեցնել չափազանց կոշտության, և օրենքը պետք է կարողանա հարմարվել փոփոխվող հանգամանքներին: Հետևաբար, շատ օրենքներ անխուսափելիորեն ձևակերպվում են այնպիսի հասկացություններով, որոնք քիչ թե շատ անորոշ են և որոնց մեկնաբանությունը և կիրառումը պրակտիկայի խնդիր է (Case of Busuioac v. Moldova, application no. 61513/00, 21/12/2004):

Վերոշարադրյալի հաշվառմամբ՝ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 382-րդ հոդվածի 1-ին կետում տեղ գտած՝ «այլ անբարենպաստ հետևանքներ» ձևակերպման կիրառումը և դրա իրավաչափությունը ենթակա են գնահատման յուրաքանչյուր կոնկրետ գործով՝ ելնելով տվյալ գործի առանձնահատկություններից, փաստական հանգամանքների համադրված վերլուծությունից:

Այսպիսով, սույն դիմումով չի հիմնավորվում ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 382-րդ հոդվածի 1-ին կետի, մասնավորապես, դրանում նշված՝ «այլ անբարենպաստ հետևանքներ» իրավական եզրույթի հակասությունը Սահմանադրությամբ երաշխավորված որևէ հիմնական իրավունքի և (կամ) ազատության: Այսինքն՝ սույն անհատական դիմումն ակնհայտ անհիմն է, ինչը գործի քննությունը Սահմանադրական դատարանի կողմից մերժելու հիմք է:

Ուստի՝ սույն անհատական դիմումով գործի քննությունը Սահմանադրական դատարանի կողմից ենթակա է մերժման՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի և 69-րդ հոդվածի 5-րդ մասի հիման վրա՝ դիմումն ակնհայտ անհիմն լինելու հիմքով:

3.2. «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ Սահմանադրական դատարանը գործի քննությունն ամբողջությամբ կամ մասամբ մերժելու մասին աշխատակարգային որոշում է ընդունում, եթե դիմումում առաջադրված հարցերը ենթակա չեն Սահմանադրական դատարանին:

Սահմանադրական դատարանը 2009 թվականի մարտի 17-ի ՍԴԱՈ-21 աշխատակարգային որոշմամբ արձանագրել է, որ «(...) Բոլոր այն դեպքերում, երբ դիմողը, ձևականորեն վիճարկելով օրենքի դրույթի սահմանադրականության հարց, ըստ էության բարձրացնում է այդ դրույթի կիրառման իրավաչափության հարց կամ հետապնդում է այլ նպատակներ, ապա այդպիսի դիմումները ենթակա են մերժման՝ (...) որպես սահմանադրական դատարանի քննության ենթակա հարց չառաջադրող դիմումներ»:

Քննարկվող համատեքստում, հաշվի առնելով Դիմողի ներկայացրած դիրքորոշումները, Սահմանադրական դատարանը գտնում է, որ վերջինիս կողմից բարձրացվել է այնպիսի հարց, որը ենթակա չէ Սահմանադրական դատարանի քննությանը՝ հետևյալ պատճառաբանությամբ.

հարկ է փաստել, որ սահմանադրական կոնկրետ վերահսկողության առարկա կարող են դառնալ այնպիսի վեճեր, որոնց հիմքում դրված են ոչ թե կոնկրետ գործի փաստական և (կամ) իրավական հանգամանքների գնահատման, վիճարկվող իրավական նորմի՝ տվյալ գործով կիրառման կամ չկիրառման հարցեր, այլ վիճարկվող նորմատիվ իրավական ակտի սահմանադրականության գնահատման հարցեր:

Այսինքն՝ Սահմանադրական դատարանում քննության առարկա կարող է լինել բացառապես նորմատիվ ակտի, ինչպես նաև համապատասխան դրույթին

իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանության սահմանադրականության գնահատումը:

Մինչդեռ, սույն դիմումով Դիմողի կողմից բարձրացված հարցի ըստ էության քննությունը ենթադրում է Սահմանադրական դատարանի կողմից ոչ թե վիճարկվող դրույթի սահմանադրականության գնահատում, այլ դատարանների կայացրած դատական ակտերի իրավաչափության ստուգում, որը դուրս է Սահմանադրական դատարանի իրավասության շրջանակից:

Այսպես՝ դիմումին կից ներկայացված՝ թիվ ԵԴ/12618/02/19 քաղաքացիական գործով կայացված դատական ակտերի ուսումնասիրության արդյունքում Սահմանադրական դատարանը եզրակացնում է, որ այս պարագայում Դիմողը, ձևականորեն վիճարկելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 382-րդ հոդվածի 1-ին կետի, մասնավորապես, դրանում նշված՝ «այլ անբարենպաստ հետևանքներ» իրավական եզրույթի սահմանադրականությունը, ըստ էության, բարձրացնում է տվյալ դրույթի կիրառման իրավաչափության հարց:

Քննարկվող համատեքստում կարևոր է վկայակոչել Դիմողի ներկայացրած հետևյալ դիրքորոշումը. «Հատկանշական է, որ ՀՀ Վճռաբեկ դատարանի սահմանադրական պարտականությունն է հանդիսանում նաև իրավական եզրույթների մեկնաբանման միջոցով իրավակիրառ պրակտիկայի ձևավորումը: Հաշվի առնելով ՀՀ դատական իշխանության համակարգում Վճռաբեկ դատարանի՝ ՀՀ Սահմանադրությամբ նախատեսված գործառնական տեղը և դերը՝ խնդրի առավել կանոնակարգված և կանխատեսելի լուծումը կարող էր իրականացվել նաև Վճռաբեկ դատարանի կողմից՝ «կամ նրա համար այլ անբարենպաստ հետևանքներ» եզրույթի ընկալման չափանիշների վերաբերյալ նախադեպային որոշման շրջանակներում (...):»:

Դիմողը նաև նշել է. «(...) ՀՀ քաղաքացիական օրենսգրքում «կամ նրա համար այլ անբարենպաստ հետևանքներ» անորոշ եզրույթի ձևակերպումը իրավակիրառ պրակտիկայում տեղիք է տալիս կամայական և տարածական մեկնաբանության,

ինչի արդյունքում կամայական մեկնաբանությունը գործնականում կարող է ստեղծել միևնույն իրավիճակներում իրավունքի սուբյեկտների նկատմամբ տարբեր վերաբերմունքի դրսևորման վտանգ: Նշված կամայական մեկնաբանման վտանգը հաղթահարված չէ ՀՀ Վճռաբեկ դատարանի կողմից կայացված որոշման շրջանակներում, քանի որ ՀՀ Վճռաբեկ դատարանը ձեռնպահ է մնացել «այլ անբարենպաստ հետևանքներ» եզրույթի էությունը բացահայտելուն ուղղված նախադեպային որոշում կայացնելուց, որով էլ պայմանավորված Բանկը դիմում է Բարձր դատարանին՝ վիճարկելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 382-րդ հոդվածի 1-ին մասում նշված «այլ անբարենպաստ հետևանքներ» եզրույթը ՀՀ Սահմանադրության 79-րդ հոդվածին հակասող և անվավեր ճանաչելու խնդրանքով»:

Ինչպես ակնհայտ է Դիմողի կողմից ներկայացված դիրքորոշումներից՝ վերջինս իր անհամաձայնությունն է հայտնում թիվ ԵԴ/12618/02/19 քաղաքացիական գործով Սնանկության դատարանի և Վճռաբեկ դատարանի կողմից կայացված դատական ակտերի բովանդակությանը: Մասնավորապես՝ Դիմողը վիճարկվող դրույթի հակասահմանադրականության որևէ հիմնավոր փաստարկ չի ներկայացնում, իսկ որպես փաստարկ ներկայացվող դիրքորոշումներն առավելապես վերաբերում են դատարանների, մասնավորապես, Սնանկության դատարանի և Վճռաբեկ դատարանի գործողությունների (կայացրած դատական ակտերի) իրավաչափությանը:

Այս առումով կարևոր է արձանագրել, որ Դիմողի համար անբարենպաստ իրավական հետևանքներ են առաջացել հենց թիվ ԵԴ/12618/02/19 քաղաքացիական գործով Սնանկության դատարանի կողմից 2020 թվականի հոկտեմբերի 20-ին կայացված վճռի և Վճռաբեկ դատարանի կողմից 2022 թվականի նոյեմբերի 18-ին կայացված որոշման հետևանքով:

Հաշվի առնելով վերոշարադրյալը՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ սույն դիմումի հիմքում ընկած է թիվ ԵԴ/12618/02/19 քաղաքացիական գործի շրջանակներում ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 382-րդ հոդվածի 1-ին կետի կիրառման իրա-

վաչափության հարցը, որը Դիմողը քողարկել է ձևականորեն նշված դրույթի սահմանադրականությունը վիճարկելու միջոցով:

Ուստի՝ սույն անհատական դիմումով գործի քննությունը Սահմանադրական դատարանի կողմից ենթակա է մերժման նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված՝ դիմումում առաջադրված հարցի՝ Սահմանադրական դատարանին ենթակա չլինելու հիմքով:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և 6-րդ կետերի, ինչպես նաև 69-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

«Ինեկոբանկ» ՓԲԸ դիմումի հիման վրա՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 382-րդ հոդվածի 1-ին կետում նշված՝ «այլ անբարենպաստ հետևանքներ» իրավական եզրույթի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ՝ գործի քննությունը մերժել:

**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՆԱԽԱԳԱՀ**

18 ապրիլի 2023 թվականի
ՍԴԱՈ-37



Ա. ԴԻԼԱՆՅԱՆ